

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի է, կես տարեկան 6 ռուբլի, եռամսհան համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմեյան խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшахъ“.
Tiflis, Rédaction „Mschak“.
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացը կիրակի և տոն օրերից):

Կապարարութիւնը ընդունւում է ամեն լիցուով:

Կապարարութիւնների համար վճարում են
իրարմանցիւր բառերն 2 կոպեկով:

Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ ԵՒ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻՎԱԾ 1900 ԹՎԱԿԱՆԻ

ՄՇԱԿ

(28-րդ ՏԱՐԻ)

ԴՐԱՎԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԿՐԻ

ՄՇԱԿԻ, ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ ԵՒ ՆՈՅՆ ՊՐՈԳՐԱՄՄՈՎ ԵՒ ՆՈՅՆ ՈՒՂԱՌԹԵԱՄԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՄ. «Մշակ» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ և տասն ամսականը՝ 9 ռ., ինն և ութ ամսականը՝ 8 ռ., յոթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝ 6 ռ., հինգ ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ. և մի ամսականը՝ 1 ռուբլի: ԱՐՏԱՍԱՀՄԱՆԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի:

«ՄՇԱԿԻ» գրվել կարելի է ԽՐԱԿԱՐԱՍՏԱՆԻ (Բաղրամյայ և Բարոնական փողոցների անկյուն): Կարողութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻ» գրվելու համար, և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելու, պէտք է գրման հետեւալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция „МШАКЪ“, իսկ արտասահմանից՝ ТИФЛИС, Rédaction du journal arménien „MSCHAK“:

Կապարարութիւններ ընդունւում են բոլոր լիցուներով:

Ա Պ Ա Ռ Ի Կ Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ն Զ Ե Ը Դ Դ Ո Ւ Ն Վ Ո Ւ Մ

ԲՈՎԱՆԱԿՈՒԹԻՒՆ

Խղճալի գործունէութիւն.—Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Նամակ Խարկովից. Նամակ Արմաւիրից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ՀՅՈՒՅԻՐԵՆԵՐ.—ՍԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Խննդներն արդիւնաւորաւ:

ԽՂՃԱԼԻ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹԻՒՆ

Ներկայ տարվայ ընթացքում մենք ստացանք Պարսկաստանի Առաքելական Նախագի զանազան կողմերից բազմաթիւ նամակներ, որոնց միայն մի մասը լոյս ածու է «Մշակ»-ում, իսկ մնացածը անկարող էր ապկել այն պատճառով, որ նա շատ քիչ բացատրութեամբ պարունակում էր իր մէջ անվերջ վիճարանութիւններ բոլորովին անհետաքրքիր և ապարդիւն հարցերի մասին: Դործը թույլած, դպրոցը, արհեստանոցը, գրադարանը մոռացած՝ մեզ ուղարկում էին մի գլուխ անձնական ընդհանրութիւններ, որոնց ոչ վերջ կարող էր լինել և ոչ դատաստան: Եւ բնորոշ է մի հան-

գամանք, որ իւրաքանչիւր յօդուածագիր յայտարարում էր միւսներին անպայման խորախ, ստախոս, չահաճօլ, անազնիւ և ստորաքարշ անձնաւորութիւններ, որոնք ընդունակ են ամեն տեսակ կեղտոտ վարմունքի:

Թող չը մոռանան Ատրպատականի նման մի յետ ընկած տեղում գտնվող փոքրաթիւ գրագէտ ոյժերը, որ նրանք հետաքրքիր կարող են լինել մեզ համար միայն այն ժամանակ, երբ նրանք ներկայանում են իրեն նպատակներ լոյս և դիտակցութիւն տարածելու այնտեղի խելով և կարօտ ազգայնականութեան մէջ: Անձնական հաշիւներից և կրքերից առաջ եկած վիճարանութիւնները ոչ միայն ապարդիւն և անհետաքրքիր են ընդհանրութեան համար, այլ և վայր են դրում այն անձանց վարքը, որոնք անկարող են այդ մանր և կեղտոտ վեճերից ձեռք վերցնել:

Ոգեարկած րօպէսներին այդ անձինք համարում են իրանց կոչված կուլտուրական և քաղաքակրթական դեր կատարելու Առաջաւոր Ասիայում. բայց բաւական է, որ անցնեն առաջին րօպէսները և ահա հան-

դէս են գալիս մտաւոր խեղճութիւնը, բարոյական սնանկութիւնը և քաղաքակրթական ու կուլտուրական անպարաստութեան իրականութիւնը: Ի՞նչ եղան այն նոյն իսկ շատ հասարակ, շատ թեթեւ և շատ դիւրին իրադրոճելի ծրագրերը, ինչո՞ւ չիրադրեցին աղքատներին ինամելու, արհեստներ սովորեցնելու, գրագիտութիւն տարածելու, ծագիցներ հիմնելու և ուրիշ օգտակար գործերի ծրագրերը: Բոլորհետեւ ոչ ոք չէ ուզում տոկոս և երկարատե կերպով աշխատել ամենահասարակ կուլտուրական գործի համար, այլ ցանկանում է արտաքուստ մի փայլ ցոյց տալով՝ ծածկել իր անգործութիւնը: Փող իւրաքանչիւր մարդ ընչ և անձնուէր կերպով իրադրոճելի մի որ և է, թէկուզ ամենահասարակ, բայց օգտաւէտ կուլտուրական գործ, և նա կարող է հաւատացած լինել, որ թէ ազգայնականութիւնը նրան կը գնահատէ և թէ այդպիսով նա զինաթափ արած կը լինի իր հակառակորդներին:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ս Մ Ո Ւ Լ

Կովկասեան բաղբերը մի ժամանակ ողորում էին բանաստեղծներին, իսկ այժմ միայն ֆիլիսոփաներին երգիծարան գրչին են նվիր տալիս: Մի ժամանակ Պոլշինը, Լեքսմուսը հրաշալի տղերք էին հանում այն հիացմունքից, որ պատճառում էր նրանց ոչ միայն կովկասեան վեճ ու չընաղ բնութիւնը, այլ և այդ բնութեան մէջ ապրող մարդը իր առօրեայ կենցաղով, լեռնայն ըրիզ և ասպնական բնաւորութեամբ: Միայն Լեքսմուսը քանի քանի տեսարաններ ունի, ուր կովկասցու մէջը արտայայտւում է բուն կերպով, որ սիրահարված երկրասարգը այնքան բանաստեղծական է հարգանքներով և ձգտումներով մէջ փայնում է իր սիրող առարկան: Եւ այդ ամենը տեղի ունի մնացից մի 50—60 տարի առաջ: Իսկ այժմ, ժամանակակից տեղի պիղծանք իր կնիքն է դրել ամեն տեղ: Եւ այդ հանգամանքը արձանագրում է «НОВОСТИ» լրագրի մէջ տաղանդաւոր ֆիլիսոփայի տպ. Բուզկով, հիմք ընդունելով մի դատաստանական գործ, որ նորեքուս քննվեց թիֆլիսի նախագում:

Քաղաքակրթ աշխարհի սահմաններում միայն Կովկասն է, կարծես, ուր երբեմն եր-

բեմն կատարվում է մի յանցանք, որը ամեն տեղ հիացմունք կը պատճառէր չափահաս աղջիկներ ունեցող մայրերին. դա աղջիկ փախչելն է: Լինելով շատ հին տեղական սովորութիւն, հետեւե՞ր և ուղեկից թափառական և առաջակային կեանքի նա, սակայն, բնականաւոր էական փոփոխութիւնների է ենթարկվել. յարմարվելով կուլտուրական, հաստատարական կեցութեան և չըմանին: Այսպէս, առաջ աղջիկներին յափշտակում էին անպատճառ ձիով. ձիւն վազում էր և ինչպիսի ու ճարպիկ, կրկից դուրս տաքացած երկրասարգի ուժով կրծքի վրա ընկած էր աղջկայ գունատված դէմքով դուրս, և աղջիկը աշխատիւմ էր: Իսկ բանաստեղծական և պատկերասրբ բան էր: Այժմ, փախչելու գործողութիւնը կատարվում է համարեա միշտ կատարով, սեփական կամ վարձու կանքով: Նա չէ պատճառում հեծնելու ձի, այն էլ, պէտք է նիթարել, սրաքաւ. ձի դնել, և այդ պատճառով անհամեմատ էման է, քան նախկին միջոցը. կայ և այն, որ այժմեան միջոցը անելի յարմար է, թէ և կատարելապէս պրօդակ է: Կատարանք աղջիկ փախչելու համար մի քիչ թանկ է վերցնում, քան չընաղ կաքում գրօտանքի տանելու համար. բացի դրանից, կաքի մէջ միշտ տեղ է գտնվում և առանցքան նպատակով երկու-երեք մարդկանց համար, որոնք ներկայութիւնը կարող է առնաղվածի վրա հանդիսանալ և զգուշական տպարարութիւնը գործել: Մի ուրիշ հանգամանքն էլ այն է, որ առաջ Կովկասում աղջիկներին փախչում էին միայն յանուն սիրոյ, իսկ այժմ նրանց առանցքում են ակնադալ սարքելու նպատակով:

Պատմվում է եղելութիւնը. թէ ինչպէս վեց երիտասարդներ, մի աղետականի առաջնորդութեամբ, փախչել են մի վահի և հարուստ հարսնացու. և երբ գործը դատարանին է հասել, նրանք կանգնել են և իրանց արարքի պատճառը այն են յայտնել, թէ ուզում էին սկանդալի մէջ գցել հարսնացուին և նրա մօրը:

Մեծ ախորժանքով, մի անկեղծ ողորութեամբ պատմում էին նրանք իրանց սարքած սկանդալի բոլոր մանրամասնութիւնները: Շատ պարզ երևում էր, որ պանդաղ նրանց պատճառել է բարձր և նուրբ բաւականութիւն: Երիտասարդ սեռերի ներկայացուցիչներ են դրանք, որոնք աճում և զարգանում են ազատութեան մէջ, հեռու ամեն տեսակ դատաքրքրից...

Այս նուրբ ու սուր հեղուկները ցոյց է տալիս, որ վաղուց, շատ վաղուց մեր բաղբերը ընդունել են հիւսնադոտ կերպարանք, որովհետեւ ժամանակակից կեանքը անխուսափելի պահանջներին ենթարկվելով, մենք մեր մէջ պահում ենք անխախտութեան, լիարժեքական և առաջակային կեցութեան դարերի շատ և շատ յատկութիւններ: Միանգամայն ճիշդ է և այն,

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԻՆՏԵԼԻԳԵՆՏ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏ

I

Չորս-հինգ տարի սրանից առաջ, Բագու-Բալախանեան գործարանական կեանքում գործակալ և տար դատակարող բոլորովին այն պատկերը չէր ներկայացնում, ինչ որ այժմ է: Մեծ մասամբ տղէտ, թերուտ, անգրագէտ, կիսա-կայողութիւններ տէր անձանց ձեռքերն էր այս նոր ծաղկող արդիւնաբերութեան գործառնարական մասը: Եւ, որքան մենք կարողացանք դիտել, այն ժամանակ վաճառականներ և վաճառականութեան այդ պատկերը համարեա թէ չարունակութիւն էր Բագուի «Ոսկի Արագայի» մէջ նկարագրված վաճառականութեան, որը նրանից զեւ մի անելորդ վատ կողմով էլ էր դանազանվում—մի և նոյն խարդախութիւնը, որով թեան խոխոտումը, գոհակութիւնը, որոնք վէպի հերոսի մէջ այնպէս պարզութեամբ են արտայայտվում—այստեղ ծածկված էր օղակած չապկի և փայլուն ցիլինդրի տակ ու չղիւղված ոսկով և արամանդներով ժամանակը ոչ տք է դար ջնջելու մարդկութեան և վաճառականու-

թեան համար այդ միանգամայն անպատշաճ լուրջանք թէ մարդ դառնալ կը նշանակէ կողոպտել, կոփել ուրիշին, տիրանալ ուրիշի սեփականութեանը և այլն և այլն: Սակայն ամեն ինչ դէպի լաւ բարձրացող ժամանակի սինը՝ լոյսը վրա հասաւ և այստեղ Այդ լոյսի ճառագայթները մէկը—մեր դաւառական ինտելիգենցիան հանդիսացաւ: Փակված դպրոցների բազմաթիւ անդրծ ուսուցիչները, Բագու եկան: Նոր աւարտող երիտասարդների առջև էր կար այդ ասպարէզը. սրանց մեծ մասն էլ, հրաժեշտ տալով դպրոցական նստարանին և անկախ լինելով շարունակել իր ուսումը—գործելու Բագու եկաւ: Եւ այդ ժամանակվանից սկսվեց մի կաւ տարբեր ձգտումներով և նպատակներով Բագու եկած սերնդի մէջ: Կուր յաւնուն ճշմարտութեան, մաքրութեան, բայց կուր վտանգաւոր և անհաւատար, որովհետեւ հին սեռուղի կողմն էին հէնց դրանց խօզէյնները: Հիմաւորց «ժակ ազգաւոր», փիլիսոփայ մաշված խօսքերն էին այդ մարդկանց միակ ողորմելի դէմքը, որոնք, սակայն, շատ շուտ փրկվեցին այն վախճանի իրականութեան առջև, երբ նախկին ուսուցիչը առևտրական ասպարէզում ստանձնած իր պաշտօնը ամենաաղող և ռդտաւէտ կերպով կատարեց, շնորհիւ բարեխղճութեան և բարոյական պարտականութեան մասին ունեցած միանգամայն տարբեր հասկացողութեան, քան այն, ինչ որ ունէին սրա անար-

ժան և անհաւատ մրցակիցները, կեանքը և նրա նպատակների մասին իւրաքանչիւր յայտնի սկզբունքների և գաղափարների շնորհիւ: Բայց ինչպիսի հարաւորութիւն ունեցան դրանք կուր գաշտ մտնել և բարոյապէս յաղթող հանդիսանալ: Գոչ է հարցնել ընթերցողը, քանի որ հէնց այդ ժամանակներում մամուլի մէջ յաճախ գտնուեցին էին լուրում, թէ գործատիները նոր եկած երիտասարդներին գործ չեն տալիս, ասելով. «Բարոյապետը ինչ է, որ կ'օտ տրօլ չէի կ'կ'ա մ'պրի կ'ա չ'էի կ'լին ին»... Այնքան էլ միամիտ չի լինի ընթերցողը, որ կարծէ թէ հէնց սկզբից բարոյականութեան, արդարութեան և ճշմարտութեան գրօշակը յաղթող հանդիսացաւ: Ոչ, այստեղ օգնութեան հասաւ մի պատահականութիւն միայն: Հարստաւաճող անյաղ գանդիկները եղած գործերը ծաւալը լայնացրեց, կրկնապատկեց և եռապատկեց: Հարկատու էին աշխատաւոր ձեռքեր և ահա մեր կրեստները միայն ճարտահատեալ ամենաուղորմելի վարձատրութեամբ գործելու ասպարէզ տուեցին ինտելիգենտ ոյժերին՝ հաւատարմ մընարով տղէտ փառածուրի սկզբունքին, այն է՝ ամեն քայլափոխում ինչեցին, որ նա իր ողորմութիւն է պահում աղպիսի ծառայողներ... Այստեղից ահա սկսվեց մեր վերն յիշած կրճարի, որը թէ և կարծրացած ուղեղների վրա ծակելու տեղ գտաւ, բայց շատ թանկ նստեց իրան, կուրի վրա: Հրապարակի վրա դէմ առ-

դէմ կանգնած էին հարստաւաճող, գողանալու, մարդ դառնալու նպատակով մտած գործակալները և իրանց օրական պարէնը հայթայթող հաւատարմ ծառայելու նպատակով պաշտօն ստանձնած նորեկ երիտասարդները, որոնք շատ հեռու էին շողորմելու, խաբուր, ստելու և անբարեխղճութեան այլ բազմաթիւ թէօրիաներից: Ողորմութեամբ պաշտօնի տէր դարձած, բայց փչանալու ցանկութիւն չունեցող երիտասարդը ոչ միայն չը ըստմեց, չը գողացաւ, այլ և լուռ չը մնաց, տեսնելով իր պաշտօնակցի նոյնանման հերոսութիւնները. նա բողոքեց, արդարութիւն պահանջեց. նա լուռ չը մնաց, երբ գողացողը նոյն իսկ ոչ թէ իր պաշտօնակիցն էր, այլ երբ կանաւարիչը, կամ ինքը՝ գործատէրն էր:

Ինչ հետեւե՞ր դրանից, նա զրկվեց այդպիսի տեղերից, շատ զննեցում հեռաժողի կուլտուրին, ժակ փիլիսոփային: Երկար ժամանակ անգործ, իր և իր ընտանիքի դրութիւնը նոյն իսկ չը փոխեցին կուլուր գնըը, չը վաճառեցին հաւատով կուլուրին: Կրկնում ենք, դա այնքան էլ էման չէր նստում, շատեւր գաւառական ամենամաքուր և մի և նոյն ժամանակ կրպիտ իղալիստներից նոյն իսկ այնքան անդրջոյն այնքան բուռն կերպով բողոքեցին տիրող կարգերի դէմ, որ նրանց դրութիւնը, ապագան ընդլիտ վտանդի ենթարկվեց, մինչև այժմ էլ նրանց դրութիւնը այնքան անապահով է, որ

որ այդ դրույթները պահպանվում է մասամբ և այն հանգամանքի շնորհիվ, որ երկրաբանական լուսնային դասագրքերից հետո է պահում իրան. մինչդեռ դրանք, այդ դասագրքերն են հարկաւոր օրինակով մարդիկ ստեղծելու համար...

ՆԱՄԱԿ ԽԱՐԿՈՎԻՑ

Նոյեմբերի 24-ին

Ամսիս 20-ին այստեղի օպերային թատրոնում կայացաւ «Վովկանեան երեկոյթը», որի կազմելու գործում, ինչպէս և նախկին տարիները, մասնակցում էին համահասարակ հայերը և վրացիները: Երեկոյթը բաւական հետաքրքիր էր և բազմաթիւ: Յայտնի դերասանուհի տ. Մ. Զեմկալցեկայի և իւրեանց, պ. Մ. Կրոյկովիցի-կու մասնակցութեամբ, մօրօրաների խումբը ներկայացրեց «Զեմկալցեկայի» պիեսան: Ներկայացումից յետոյ պարեցին լեզգիական և կինոտուրի, մեծ զուարճութիւն պատճառելով ներկայ եղող հասարակութեանը: Պարերից յետոյ դրված էին կենդանի պատկերներ. վրացիները իրանց կայաններէ համար վերցրել էին ժողովրդական մի աւանդութիւն Պրօմէթէոսի մասին, որը, իբր թէ, եղել է վրացի: Արտաքին կողմից պատկերը շատ գեղեցիկ էր և շլացուցիչ, թէև բաւական տարօրինակ էր թուում տեսնել Վովկանեան լեռներում յունաց ձեփնտրին, Զեմկայի և միւս աստուածներին ու աստուածուհիներին, իսկ դրանց կողքին վրացի խաչնարածին:

Հայոց պատկերը վերցրած էր Ա. Ասարեան-նի «Վայրաժ-Վորգուհի» գրութիւնը: Պատկերի առաջին երկու մասը—բազմաթիւների գիւղից հեռանալը և քրդերի յարձակումը—այնքան էլ աջող չէին, որովհետև ուշ ստանալով Մօսկվայից դրամները, եղել էր միայն մէկ անգամ փորձ. իսկ երրորդ մասը—երբ մայրը, տեսնելով որդու և ամուսնու ստացած դիակները, խնայաբարձր է—մեծ տպաւորութիւն թողեց հասարակութեան վրայ:

Վեցանի պատկերներից յետոյ սկսվեցին եւրօպական պարերը թատրոնի դահլիճում, իսկ ֆօկլորը պարում էին զանազան ասիական պարեր: Ֆօկլորը պատրաստած էր երեք վրան, որոնցից մէկում զետեղված էր բուֆլան, իսկ միւս երկուսը մէջ գտնվում էին արաբական և կանադական լիբրեր: Դահլիճը, ֆօլիոն և վրանները զարդարված էին կովկասեան ճաշակով և բաւական գեղեցիկ տեսարան էին ներկայացնում:

Մասնաւոր անձնաւորութիւններից երեկոյթի համար աշխատում էին տ.ա. Հրիշման, Մարոշ և Ինքնավիտա. իսկ բարեգործական բազմաթիւ վերցրել էին իրանց վրա տ.ա. Լեօնտովիչ և Նենաբօլկինա և օր. օր. Լեօնտովիչ ու Նենաբօլկինա: Ուսանողներից աչքի էին ընկնում իրանց եւսանդուն աշխատութեամբ պ.պ. Գ. Պապի-կան, Զ. Մելիազարեան, Տիգրանեան և Ամիրա-չիքի: Ցանկալի կը լինէր, որ այս տարվայ փորձից խրատված, աշխատանքը հասարակ կերպով բաժանէին թողք կարողութիւնների վրա, իսկ տոմասները տարածելու մասնակցէին թողք թէ հայ և թէ վրացի ուսանողները:

Ընդհանուր մուտքը եղել է 2209 ր. 94 կ., ծախս եղել է 1250 րուբլի:

մի ամենաթիւն քանի կարող է տալալալը նրանց բարօրութիւնը: Եւ այդ բոլորը միայն այն պատճառով, որ յանդիման էին սպիտակին սպիտակ ասել...

Ինչպէս տեսաւ ընթերցողը, կռիւն իսկապէս վտանգաւոր էր, բայց բազմր և ցանկալի: Եւ ի՞նչ կայ այդ փայլուն յիշատակները միմեանց մի ամպ—դա, ամպին կառավարիչներ (որոնցից յի մ ար բա ար պաշտպանութիւն էր սպասում կուող կողմը), մեր դիպումս որ պարտնե-րի կատարեալ անտարբերութիւնն էր, որին նը-րանք ախճան ամուր են սեղծվել՝ հասարակութեան իմաստով իրանց՝ Բագուում գտած սկզբունքներին:

II

Պատկերը փոխվեց... Թէև կռիւն չէ գաղաթել, սակայն հալածանքները մեղմացել են: Բայց միայն մեղմացել այն առաւելի ծառայութեան համար, որը մատուցեց այդ ինտելիգենցիան ուկու երկրպագուներին: Իսկ ինչ ստեղծաւոր այդ ծառայութեան համար—շատ չնչին վարձատրութիւն. մինչդեռ հին գործակատարներին վճարում էին ամսական 25—30 և ամենաշատը 40 րուբլի,—սրանց՝ սակաւ 30, զիտարակւտ 40-ից սկսած մինչև 50—60 րուբլի, նաև 70 րուբլի, սակաւ էլ 80 րուբլի և ասելի: Սովորական ունեւոր այժմ ամսական 50—60 րուբլի է. 70-ը արդէն շատ բաւ է քիչ գտնվող առնիկ է, իսկ 80 րուբլին և ասելին—մի եր-ջանիկ բացառութիւն, որին արժանացողը պիտի խուճկ ծիւլ իր բարեօրին «խօսքիւն» կամ կա-

Գալով երեկոյթի նպատակին, պէտք է նկատել, որ այդ նպատակի մէկ մասը այս տարի թողութիւն անցնող էր. տալով անագին մուտք, որպիսին դեռ չէ եղել, և փոքր թէ շատ հասկացողութիւն կովկասցիների ծախսին, երեկոյթը չի-բազմաթիւ երրորդ նպատակը՝ հայերի և վրացիների մտերմանալը: Երեկոյթից դեռ շատ առաջ, երբ հայ ուսանողները գիմեցին վրացիներին, հրաւիրելով մասնակցել երեկոյթի գործում, վերջիններս ուշացնում էին դրական պատասխանը. պատճառը, ինչպէս մեզ յայտնի է, այն էր, որ նրանցից մի քանիսը դէմ էին միա-սին երեկոյթ տալուն. բայց ինչպէս երևում է, այդպիսիների թիւը շատ չէ եղել: Այնուամե-նայնիւ երեկոյթի վերջում, երբ նստեցին ընթեր-բուր, վրացիները թանցին սեղանի մէկ մասը, իսկ հայերը միւս: Ընդհանուր խօսակցութիւն չը կար:

Վաղը չէ միւս օրը այդ անձնաւորութիւնե-րը դառնալու են հասարակական գործիչներ. անհրաժեշտ է համեմատել գործունեութիւն:

Ուրախութեամբ կարող ենք ասել, որ հայ ուսանողները աշխատում են մտնելու իրանց դրացի երկրասարգութեան: Չը նայած, որ ամեն տարի համարեա հայ ուսանողները տես-նում են սառն վերաբերմունք վրացիների կող-մից, այնու ամենայնիւ այս տարի էլ նրանք առաջինը դիմեցին վրացիներին, չը կորցնելով իրանց յոյսը, որ ընդհանուր գործում գոյց կարողանան մտերմանալ:

Լ. Մ. Օսանջանեանց

ՆԱՄԱԿ ԱՐՄԱՆԻՐԻՑ

Նոյեմբերի 22-ին

Երէկ, ամսիս 21-ին, երեկոյեան, տեղի ունեցաւ Վովկանեան Հայոց Բարեգործական ընկերութեան տեղական ճիւղի վերջին ընդհանուր ժողովը, որի նպատակն էր վերաստուգել ընկերութեան վեր-ջին—մինչև փայլուն օրը եղած հաշիւները, ա-պա որոշում կայացնել՝ ընդ կանոնադրութեամբ առաջարկված ինքնուրոյն ընկերութիւն հիմնե-լու մասին, և որոշել ընկերութեան մնացորդ գումարի և կապի գործադրութիւնը:

Հրաւիրված թողք անդամներից ներկայ էին միայն մօտ՝ 40 հոգի: Ժողովին նախագահում էր Գ. Զան. Գեղեկեան: Կարողացած հաշիւներից երևաց, որ ընկերութիւնը, թողք ծախքերը հա-նած, ունի այդ օրը մօտ 10,000 րուբլի, որից ինն հազար քանի հարիւր րուբլի թիֆլիսի ըն-կերութեան մէջ է և մօտ 150 րուբլի էլ շա-րժական կայան է:

Ժողովականները վճեցին ընդունել նոր կա-նոնադրութիւնը, բանալ Արմաւիրում, համաձայն այդ կանոնադրութեան, տեղական Բարեգործա-կան ընկերութիւն, որի մասին պէտք է դիմեն ուր հարկն է: Իսկ վերոյիշեալ մնացորդ գումար-ը, որի գործադրութեան իրաւունքը, համաձայն կանոնադրութեան վերջին յօդուածի, վերապահ-վում է իրան ընկերութեան, վճեցին միմեանց տալ Արմաւիրի ապագայ բազմվելը ընկերութեան, եթէ միայն կը հաստատուի, իսկ հակառակ դէպ-քում, թողնել հինգ թիֆլիսի ընկերութեան մէջ, ուր գտնվում է և ներկայումս:

Այս բոլորից յետոյ նախագահ հայր Գեղեկեան

ուսմարչի առջև... Ինչպէս տեսնում է ընթեր-ցողը—ոռնիկների միջին թիւի տարբերութիւնը 20 րուբլից չէ անցնում: Այսպէս, այժմեան գործակատարը իր նախորդից տարեկան 240 րուբլուց ասել ստանալով, վարում է իր այն նախորդի պաշտօնը, որի օրեկան կամ շաբա-թական գողցածը այդ գումարի մի քանի պա-տիկն էր... Տեսնում էք օգուտը: Դա այնպիսի մի ակնյայտի փաստ է, որի առջև կը խնայար-վէին նաև մեր կապիտալիստները, եթէ միայն նրանք սովորութիւն ունենային մանր-մուն-րաների վրա ուշը դարձնել: Վերջին 2—3 տա-րվայ առկառական կրակոտ տենդը հրապարակ հանեց հարիւրներով մարդիկ, որոնք բազմա-թիւ գործերի ձեռնարկեցին, թէ միայնակ և թէ միացած ոյժերով. ամեն մէկը մի քանի տա-նեակ և յաճախ հարիւր հազարի բաժիններ էր վերցնում, յաճախ էլ մի և նոյն մարդը—մի քանի ընկերութիւններում երևան եկաւ: Ո՞վքեր էին դրանք. ամսական 25—30 րուբլի ստացող երկվայ գործակատարները... Այս աչք ծակող փաստին և շատ պարզ հանելուկին մենք ոչ մի բան չենք աւելացնի:

Թող նրանք, այդ նոր դրամատէրերը, հարս-տանան, որքան կանխում են, թող դրանք մը-ցեն, թէկուզ յաղթեն էլ իրանց նախկին խօղ-կներին, որոնց օրերից թակ մի ժամանակ սողացել են,—այդ փառքին երբեք չեն նախա-ձի դրանց յետնորդ տղաներ ինտելիգենտ գը-ծակատարները, բայց և չէ կարելի հաշտվել այն

յայտարարեց նիստը փակված: Ժողովականները յետնկայս շնորհակալութիւն յայտնեցին ընկերու-թեան թողք վարիչներին, և աւանձնացին պ. Ալեքսանդր Տարասեանին, որը—ընկերութեան հիմնված օրից մինչև վերջը անվատ գործել, շեկավարել է ընկերութեան թողք գործերը:

Վ. Մանուկեան

ՆԵՐՖԻՆ ԼՈՒՐԵՐ

Չքաւոր հայ ուսանողների օգտին ուղարկել են մեզ հետեալ գումարները.—Ղ. Յ. 3 ր., Խ. Ամիրաբեանց—2 ր., Ա. Կարիբեան—1 ր. 50 կ., Յ. Գրիգորեան, Յակոբջանեան, Բ. Տէր-Գրի-գորեան, Ի. Նյաղեան, Գ. Առաքալով, Ա. Պե-սէս, Մ. Զորաբով, Բեկաւով, Ն. Վեկէր, Ա. Ա-դամեան, Իվանով-Քոստով, Ս. Բախչինով, Ե. Միրվեյեանց—մի-մի րուբլի: Ա. Շահպարեանեան, Ս. Խիթարեանց, Ոհն, Ա. Գրիգորեանց, Վ. Բախ-չինեան, Ա. Չմկեան, Ա. Ղազարեան, Խարա-դեան, Գ. Մատինեան, Լ. Վ., Գ. Փիրումեան, Տ. Ալաւմբարեան, Ա. Խիթարեան, Տարապեան, Արապեան, Գ. Միրաբեան, Ա. Կարապետեան—50-ական կօպէկ. Ս. Արեշտեան—30 կ., Ս. Ղարեան և Պապիսեան—25-ական կ., Մ. Ա-դամեան, Ա. Պեպինեան, Խ. Խաչատրեան, Ե. Մատիւով—20-ական կօպէկ: Ընդամենը 29 ր. 60 կօպէկ:

Թիֆլիսի քաղաքային դոման իր վերջին նիստում, որ տեղի ունեցաւ երկուշաբթի, նոյեմ-բերի 29-ին, վերջնականապէս խմբագրեց այն դաշնագիրը, որ նա պէտք է ներկայացնէ թեւ-դիական անօնիմ ընկերութեան ներկայացուցիչ Բօրիսի ստորագրելու: Նախկին դաշնագրից, որ ստորագրվել էր անցեալ տարի, ներկայ դաշնա-գիրը զանազանվում է մի քանի համեմատաբար աննշան կէտերում: Սթէ Բօրիս չուտով ստորա-գրի դաշնագիրը, այն ժամանակ նա կուղարկվի տեղական իշխանութեան բարեխայցեցողութեան, որի հաստատութիւնից յետոյ նա կը ստանայ ի-րազօրութիւն:

«НОВОСТИ» լրագրի մէջ կարդում ենք Պետերբուր-գում կայացած հայոց երեկոյթի մասին հետեա-լը. «Այս անգամ սովորական նշուածքութիւնը և շքեր չը կար: Ազնկաններ ժողովրդական դահլիճ-ները ուր տեղի ունէր այդ երեկոյթը, առաջվան պէս ընդարձակ և մեծ մնացին, բայց ամբողջ չիւտութիւնը, վերանորոգվելուց յետոյ, դեռ չը ցածաբած, շատ խոնաւ և սառն էին: Այնչիւ, բացի Դաւիթաօվի ընթերցանութիւնից, որ կար-դաց «Արաքս» արտատուքը և աղագրին երգե-րից ու պարերից, չէր յիշեցնում արդէ Հայաս-տանը: Թեղծ հասարակութիւնը ստիպված էր բաւական սառչել, լսելով կոնցերտային բաժան-մունքը, որի մէջ, բացի Դաւիթաօվից, մասնակ-ցում էին այս անգամ Յվէտինովիչ և Պիտրօվս-կայա երգչուհիները, օրիորդ Դեմետրի, երգիչ Բանաչիչ, ջութակահար պ. Բօրիս Լեվիչի, վիո-լոնչիլիստ պ. Գորդի և պիանիստ պ. Մէլեմ,—բոլորն էլ երիտասարդներ, տաղանդաւոր: Ար-տիստական երիտասարդութիւնը ազդուութիւն ունեցաւ, և, ի հարկէ, պէտք է շատ բան եր-գէր, պատասխանելով հասարակութեան ջերմ

անմխիթար և անմիջական բարեփոխման կա-րօտ դրութեան հետ, որի մէջ գտնվում են այս վերջինները: Առաջէք խնդրեմ, ամսական 35, կամ թէկուզ 50—60 րուբլի ստացող մի եր-տասարդ, որ ունի միջնակարգ դպրոցի կրթու-թիւն, ինչպէս կարող է ապրել իր ստացածովը: Զէ որ նա տարին է գործադրել կենքի ճըշ-մարտութեանը մօտենալու համար: Ուսման շնորհիւ նա գիտէ առողջապահութեան նշանա-կութիւնը, հետևապէս ամբողջ ապրելու և հաշի-վելը նրա ամենագլխաւոր պահանջներից մէկը պիտի լինի: Նոյն ուսման շնորհիւ, դժբաղդա-բար, նա վատ մտնուի քայքայող հետեանքից վախենում է, ուրեմն պէտք է և առողջաբար մտնել ստանալ: Այլ բան է, եթէ նա այդ բա-նեքը չիմանար և անդադարապէս իր յաւ-ղով ընթանա՞ր՝ բազմաթիւ պարսիկ մշակների նման—ինչպէս ընթացել են իր նախորդները, այժմեան բար խօղչիւնները: Նա իր ազատ ժա-մեքին բաւականութիւն է ստանում ոչ թէ 30—40 կ. օդով, այլ կամենում է թատրոն, կօն-ցերտ գնալ, էսթետիկ բաւականութիւններ ստա-նալ՝ իսկ դա այնքան էլ էժան չէ նստում... Մի դասախօսի լսելու համար նա շատ թան-գնով է տոմսակ ձեռք բերում—առանց մտա-ծելու, թէ գրպանումը այդքան փող կայ... Բայց նա կըրթ, լրագրի կարգով է կամենում... Նա անկեղծ ցանկութիւն ունի թշուառի օգնելու, և կարօտ ընկերոջ կարեկցելու անյաղ պահանջ է զգում... Այդ դեռ իր անձնական պահանջնե-

պահանջներին, որոնք, սակայն, չը կարողացան տաքացնել ոչ դահլիճը, ոչ արտիստներին և մա-նուանդ արտիստներին: Լաւ էին զգում ժիպի նրանք, որոնք պարում էին: Լեզգիական, ուկրենդարան և կինոտուրի սովորական կենդա-նութեամբ անցան, մանաւանդ վերջին պարը: Պարում էին սաղանդարի նուագաժութեամբ: Ազգային երգերը կատարում էր խառն երգեցիկ խումբը, պ. Արեանդեկու շեկավարութեամբ: Հասարակութեան մէջ նկատելի էին բազմաթիւ սաղանդ վերցնողներ: Ազգային հաղուստներ համարեա չը կային: Այստեղ շաւապն էին ծա-խում ամեն տեսակ բարեգործութեան արձա-գանք տուող տ. Պետրապ I և Վշտինկայա II: Սեղանատան մէկ առանձին անկիւնում ծախում էին կախէթի գինի: Մախողներն էին հայ ու-սանողները, որոնք Թիֆլիսի տիպիական կինո-տների նման էին հաշնված:

Թիֆլիսի երգուեստ հասարակատարները կի-րակել, նոյեմբերի 28-ին, ժողովել էին դատաս-տանական հիմնարկութիւնների չիւտութեան մէջ խորհրդակցելու և ըննելու «Քրաւաբանական կոնսուլտացիա» կոչված հաստատութեան հիմ-նելու առաջարկը: Այդ կոնսուլտացիան պէտք է դատաստանական վարչութեան համար մի օժանդակիչ մարմին լինի մի քանի խնդ-րիւնների ըննութեան: միջոցին, օրինակ նոր երգուեստ հասարակատարների ընդունելութեան միջոցին պէտք է նախօրը հարցնվի այդ կօն-սուլտացիայի կարծիքը:

Վարչկապկաղում հրատարակվող «Հաճօրեա» լրագիրը հաղորդում է, որ Վեհափառ Կաթո-ղիկոսի առողջութիւնը խանգարված է և այդ պատճառով նա հրաժարվել է թեմերը շրջագա-լելու իր դիտաւորութիւնից. բժիշկները խոր-հուրդ են տուել նրան կատարելապէս հանգիստ մնալ:

Մայրաքաղաքի լրագիրները հետեալ տեղե-կութիւններ են հաղորդում այս օրերս հիւան-դացած կոմս Լեվ Տօլստօի առողջական դրու-թեան մասին: Տօլստօի մօտ նկատված է լեւոր-դի ծաւալի մեծանալը: Նոյեմբերի 23-ին, ցե-րեկվայ 2 ժամին, նրա մօտ կօնսիլիում կար: Տօլստօի տանու բժիշկ Ուսովի առաջարկու-թեամբ, կոմսուհի Տօլստայա հրաւիրեց տանու բժիշկի հետ խորհրդակցելու համար պրօֆէսօր Չէրնօվիչին: Երկուշաբթի նշաններ չեն երևում, թէպէտեւ այդ հիւանդութիւնը, որով Տօլստոյ քսան տարուց աւելի տանվում է, մեծ խնամք է պահանջում: Տօլստօի մօտիկ բարեկամները այդ հիւանդութեան սաստկանալու պատճառ համարում են յոգնածութիւնը շտապողական աշ-խատանքից, նոյնպէս և սաստիկ վիշտը իր աղջ-կանից բաժանվելու պատճառով, որը նորերս ամուսնացաւ և գնաց արտասահման:

Մի քանի ժամանակ առաջ լուրեր էին տա-րածվել, որ կոռւպուրութիւնը մտադիր է պա-կասեցնել ռուսի վրա գրված տուրքը: Այժմ «Торгово-Промышленная Газета» լրագիրը պաշտօնապէս յայտնում է, որ այդ լուրերը կա-տարելապէս անհիմն են:

Իսկ սրա պարտականութիւնները դէպի ըն-տանիքը չէ որ ուրիշ են: Իրեցուք, շատ շատե-րը ընդերս, եղբայրներ կամ դասակներ ունեն իրանց ինամը, հոգաւորութեան տակ 25-ը որ սրանք ամսական 5—10 րուբլով «առաջ» չեն անի այդպիսի սրբազան պարտականութիւ-նը իրանցից և չեն համաձայնվի, որ այդ երե-խաները փինայի կամ դարբին դառնան: Իսկ ուսման տարու համար ամսական քանի տա-նեակ է հարկաւոր, թէկուզ մի երեխայի հա-մար...

Ահա ձեզ ինտելիգենտ գործակատարի դրու-թիւնը: Փորձը ցոյց է տուել, որ այսպիսի գը-ծակատարը, որքան էլ նեղութեան կամ թշուա-ռութեան մէջ լինի, ոչ մի դէպքում չի գողանայ, իսկ մեծ առնիկով բարձր պատճենի տէր լինե-լու համար չի թնի, զակէջ՝ չի գտնում, թէև այդ բաները այստեղ չափից դուրս խախու-ւում են: Ահա այսպիսի դրութիւնից ստեղծվել է մի դասակարգ, աւելի քան թշուառ, մի չը տեսնված անտանելի դրութիւն: Եւ այդ անօր-ժաղ դրութիւնից է, որ մեր այժմեան երիտա-սարդները, թէև չըբաւատող թունաւոր միմո-լորդից չեն ազդվում, սակայն ակամայից հրա-ծնւո են տալիս շատ այնպիսի ցանկութիւննե-րի, յատկութիւնների, որոնք երկար տարիներ նրանք փայայել են և որոնցից յօժարութեամբ երբեք չէին բաժանվի...

Ահա պրօքեստարաւոր:

Ռ. Յօվանջանեան

